



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 18

ՏԵ ՇԱԲԱԹ ԺԶ

29 ԱՊՐԻԼ 1906

Կ. ՊՈՂՏՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՆԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖՐ.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԾԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին Տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ թէ՛ Կ. Պոլիս, եւ թէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգէին արժանացած են:


Հատոր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت مرتبه مطبعی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաշքսի թիւ 52



Մ Ի Ն Կ Է Ռ
ՀԱՅՈՒՅԵՐԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏՔԻՆ



մենք նաև լաւագոյն է ստիճ մեքենան ամենէն կատարեւ լաւգործուածը,
հաստատուեալով իւրագործելին ըլլալուն թղկանդակ աշխարհի

ՄԻՋ՝ ամեն մարդ Սինկեի մեքենան կը գնէ :
ՍԻՆԿԵՐԻ մեքենանները կը ծախոյն մի միայն Սինկեի Ընկերութեան վաճառատանց մէջ :

ԲԵՐՍ. (1. Մեծ փողոց, Պօն Մարշէլի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին .
 (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի կիսէին դէմ .
 ԿՈՒՆԹՐԱ (1. Սինկեր խան, Թիւնէլի ետևը .
 (2. Գարաքէօյ, Թրամէլէի կայարանին դէմ .
 ՊՈԼԻՍ (1. Սուլթան համալ .
 (2. Սուլթան Պէյազիտ, Թրամէլէի կայարանին դէմ, Թիւ 13 .
 ԶԱՎԱՐՈՒՄ (2արդ՝ Պօսու , Թիւ 12

1990

Կատարեալ Երաշխակոտորից
Պատկաններ գաւառներու քոյր քաղաքներու մէջ

Սխմբելի Հովհաննիսյան Կեղ. վարդապետի Գրք. Բերա, ՄԱՅԱԳՐԱՎՈՐ 343 և
343 Կրկին, Տևողողապետներ: Երբ 45 . . . Դավթաշ 30 . . . Դավթաշ

፩ ፲ ፭ ፮ ፯ ፬ ፰ ፱ ፳ ፶ ፷ ፸ ፹

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԿԿԻԱ

[Decorative flourish]

[illegible]

Դրամագույնի եւ Պսիկոսի գույնի միմյանց հակադրությունը

[illegible]

Հնկերութեան գրամատարութիւնը ԿՊՅԸ, Հնդհանուր գործակալութեան գրասենեակն է. Պալես, Սիւեանաք խան, Թիւ 11-16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատոււէնոր ճշիկայացուցիչներ :

Հինգրոս Արկայացուցիչ — Երեւանի քաղաքի քաղաքապետարանի կողմից (Ն. Լուսինյան)

ՀԱՅԴԱՌՆԱԿԱՆ .8 ՀԱՅԿԱՌԴՈՂՔԱՅԷ Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

ՏԵ ԶԻՔ ԻՄԱՔՏԱՆԸ ԻՐԱ-ԴՐԱՄՔ , ՄԻՂՈՒՄ . Ք .



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 18

ՇԱՔԱԹ

29 ԱՊՐԻԼ 1906

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹԱՄԲԻՆ ՎՐԱՅ

Յորմէհետէ Յ. Արփար, Ե. Թուրայ-
եան և Գրիգոր Թորոսեան իրարու ե-
տեւէ սկսան մշակել սեռ մը, զոր կա-
րելի է կոչել « ժամանցքի գրականու-
թիւն », շատ ըմբռնումներ փոխուեցան
գրական հրապարակին վրայ : Արտա-
շէս Յարութիւնեան բարձր գրականու-
թեան պաշտպան կը հանդիսանայ իր
ուռուցիկ յօդուածներով, և խմբա-
գիրներ, որոնց տրուած է առանձ-
նայատուկ տիտղոսներ, իրենց միակ
հունձքերը բազմամեայ վարուցաններէ
վերջ գրական գաշտին վրայ, իրենք
ալ իրենց կարգին կը սահմանեն գրա-
կանութեան պէտքերը, մաքուր և
պարկեշտ սեռերու փափաքը ջանալով
արծարծել գրողներուն մէջ, յայտա-
բարելով թէ իրենք ալ վերջերս դար-
ձի գալով, հրաժարած են այլ եւս
վրան-բաց գրութիւններ հրատարակել :
Ըսել է թէ անհատական պարկեշտու-

թեան հետ շատ մօտէն կապակցութիւն
ունի գրականութիւնը : Երբ մէկը այլ
եւս, ի չգոյէ նիւթական միջոցներու և
ի չգոյէ կենսական նիւթերու, յե-
տըս ընդ կրուկն դարձ ընէ գէպ
ի « մաքուր » գրականութիւնը, դա-
տապարտած կ'ըլլայ բնականաբար իր
գրականի և քրօնիկի անցեալը, ըսել
է թէ գրականութիւնը ա'յն ատեն կը
մաքուրի, կը բարոյանայ, երբ այլ եւս
զայն ի չարն մշակողները կը դադրին
արոփուն զգալէ իրենց սիրտը և չող-
չողուն իրենց քսակը, ըսել է թէ գը-
րականութիւնը գրականութեան հա-
մար պէտք չէ մշակել, այլ պէտք է
զայն մշակել սրտին բաբախումներուն
և քսակի դիւրութիւններուն համեմատ,
և ցորչափ սիրտը կը տրոփէ, և քսակը
կ'օժանդակէ սրտին, ներելի է վրան-
բաց գրականութիւն ընել, ներելի է
անհատական անբարոյութիւններու մէջ

Թաթախիլ, պայմանաւ որ այդ վրան-բացութիւնները և անբարոյութիւնները դադրին երբ սիրոյ բոցը նուազի, և տնտեսապէս չժպտի այլեւս մեր կեանքը: Եթէ այդ խմբագիրները հրաժարած են այլ եւս վրան-բաց գրութիւններ հրատարակելէ, լռելեայն ընդունած կ'ըլլան թէ չարիք մը գործուած է ասկից առաջ իրենց հրատարակած վրան-բաց գրութիւններով, թէ անուրանալի է անոնց գործած յուռի ազդեցութիւնը, և թէ հիմա իրենց դարձի գալով, գրականութիւնը կը դառնայ կ'ըլլայ Պրօպատիկէի մաքուր աւազանը, որուն ջուրերուն հրաշալի մէկ եռուեփի միջոցին այդ խմբագիրները չնաշխարհիկ բախտը ունեցան նետուելու անոր մէջ, և երկար տարիներու գրական ձախող ուղղութենէն իրենց անձը մաքրելու, և նորօրինակ տրամագրութիւններով երեւնալու գրականութեան թաւրին վրայ աշտանակած, սէգ կերպարանքով և կորովի ջիղերով, Գրական այս ապաշխարութիւնը ունի իրեն մէջ դիտողութեան և նշանակութեան արժանի մէկէ աւելի կէտեր: Նախ աչքի կը զարնէ սա՛ տըխուր իրողութիւնը թէ վրան-բաց բայց անկեղծ գրականութիւն մը կեղծաւոր գրականութենէ մը խտրելու ճամբուն վրայ կը գտնուինք: Ո՞րը նախամեծար համարիլ. — կեղծաւորութիւնը բացարձակ ժխտումը համարուած է ճշմարիտ գրականութեան, կեղծաւորութիւնը բարբերու վատթարացումն է համակ: Շատեր ինծի պէս վրան-բաց գրականութիւնը հազար անգամ նախամեծար պիտի համարին կեղծաւոր գրականութենէն, առաջինը կարելի է սահմանափակել, կոկել և բանաւորութեան չըջանալի մը մէջ պարփակել:

Բայց կեղծաւոր գրականութեան համար ի՞նչ ըսենք, կեղծաւորութիւնը ամենդուկ է, և ո՛րքան ճգնի ծածկել զինքը, ա՛յնքան աւելի կը վատթարանայ, ա՛յնքան աւելի փաստակար կը դառնայ բարոյականին, կեղծաւորութիւնը գրականութեան մէջ անգոյն անկերպարան տարր մըն է, վրան-բաց գրականութիւնը գոնէ կեղծաւորութիւն չունի, ամէն բան հա՛ն մերկապարանոց է: Գրական այս ապաշխարութիւնը ունի նաև իր երկրորդ նշանակալից կողմը. — Մարդ շատ դժուարաւ կրնայ իր գրական անցեալը դատապարտել: Այս խմբագիրները կը զարմանանք թէ ի՞նչպէս այսքան դիւրութեամբ կը խոստովանին թէ մինչեւ հիմա վրան-բաց գրութիւններ կը հրատարակեն եղեր, բայց հիմա որոշեր են եղեր վրան-բաց յօդուածներ չհրատարակել: Այսինքն՝ յորմէհետէ թաւշանճեան էֆէնտի մրցանակ սահմանեց ժուժկալութեան նպաստաւոր յօդուածներու համար, և հիմակ ալ նպատակ կը յայտնէ բարոյական յօդուածներու համար եւս մըրցանակ հաստատելու, այս խմբագիրները, որ առաջին մրցանակին աչք ունէին, հիմակ ալ դիւրահաս կընալի պատճառով կ'որոշեն այժմէն փողահար ըլլալ թաւշանճեան ապագայ մրցանակին, վարկ բանալով իրենց հասցէին: Անկեղծութիւնն ալ ա՛յս աստիճան կ'ըլլայ:

Հարկ չկայ աւելի երկար կերպով ծանրանալ այս դարասկիզբն սկզբունքին վրայ: Հիւսուածքը շատ բարակ է, ճանճ մը անգամ պիտի կրնար պատռել այս ցանցը, զոր պարզած է ան Միսիսիբիի հոսանքէն ձուկ բռնելու համար:

Բայց խնդիրը սա՛ է թէ մարդ ո՛ր աստիճան թոյլ գրականութիւն մշակած կ'ըլլայ, երբ այսպէս օրը օրին, նիւթական նկատումով մը կը ներէ իր անձին սա՛ պատկառելի խոստովանութիւնը ընելու թէ՛ մեղա՛յ, ա՛լ կը հրաժարիմ բարոյականի (ո՞ր բարոյականին) հակառակ յօդուածներ հրատարակելէ, քանի որ մեծահարուստ թաւշանճեան էֆ. կը յայտարարէ թէ՛ վրան-բաց գրութիւններ հրատարակելը ամօթ է։ Այս խմբագիրները մինչեւ հիմա երգիծական գրութիւններու ներգործութիւնը չեն գիտեր եղեր և հիմա ապագայ մրցանակին զեղչը ընելու համար, փառաւորապէս կզարդարեն իրենց յօդուածները ամենզուկ բարոյախօսի տաղտկալի քարոզներով։ Չարաճճի Յ.Ալիիար ինչե՛ր պիտի մտածէ արդեօք այս նորանշան երեւոյթին վրայ։

Մենք կ'սպասէինք որ այդ խմբագիրները քանի մը տողովի վեր հանէին թաւշանճեան էֆ.ի սա՛ խոշոր սխալը թէ . . . Ամերիկայի մէջ շա՛տ աւելի բարոյական կայ եղեր։ Բարոյական Ամերիկայի մէջ։ Ծիծաղելի է ասիկա։ Բողբատմամբ Ամերիկայի՝ մեր միջավայրը բարոյականի հայրենիքն է, և այսպիսի աճապարարութիւններ հրատարակողները կը մատնէին իրենց անտրամաբան ոգին, և արդարեւ նշաւակ կ'ըլլան Յ. Ալիիարի սլաքներուն։ Գինովութիւն, անբարոյականութիւն (ի՛նչ կերպով որ թաւշանճեան կը հասկնայ այս վերջին բառով) աւելի մեր միջավայրէն դուրս կը մոլեգնին, ինչպէս յայտնի է վիճակագրութիւններէն։

Սակայն մեզի համար ամենէն աւելի խնդուք կը պատճառէ այդ խմբագիրներուն դարձի գալը, անհատական և

հանրային բարոյականութեան մասին մինչև ցարդ իրենց ունեցած ըմբռնումներէն։

S.

ԺԱՄԱՆՅՈՒ ԲԱԺԻՆԸ

ԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Ա. ՓՈՐՁ

Հաւկիթը՝ աղի ջուրին մէջ.

Երկու լայնաբերան շիշեր առէք, որոնցմէ մին՝ զուտ ջուրով եւ միւսը՝ խիստ աղի ջուրով լեցուցէք։ Երբ թարմ հաւկիթը անխառն ջուրին մէջ դնէք, պիտի տեսնէք թէ նա անմիջապէս ջուրին յատակը պիտի իջնէ, որովհետեւ անուշ ջուրին տեսակարար ծանրութիւնը թարմ հաւկիթի տեսակարար ծանրութենէն քիչ է։ Մինչդեռ ընդհակառակը, մի եւ նոյն հաւկիթը աղի ջուրին մակերեսին վրայ կը ծփայ, հակառակ զայն սուղեղուձեր բոլոր ճիգերուն։

Ահա այս պատճառաւ, գետի կամ անուշ ջուրի մէջ լողալը ծովու ջուրի մէջ լողալէն դժուար է, եւ աւելի դիւրութեամբ կարելի է երկար առեն մնալ ծովու երեսը, քան թէ գետի մէջ։

Գետի եւ ծովու մէջ լողանք ընողները փորձով ստուգած ըլլալու են այս երեւոյթը։

* * *

Բ. ՓՈՐՁ

Ձեռքը ջուրին մէջ խօթել առանց քրջելու.

Չուրով լեցուած ամանի մը մէջ դրամի կտոր մը, մատանի մը կամ որ եւ է ծանր առարկայ մը նետեցէք, պիտի տեսնէք թէ անմիջապէս ջուրին յատակը պիտի իջնէ։

Հիմա խնդիր է այդ նետուած առարկան ջուրին մէջէն հանել առանց ձեռքը թրջելու։

Ասոր համար ջուրին մակերեսին վրայ ցանցեցէք փոշիացած այնպիսի նիւթ մը որ ջուրին հետ որ եւ է յարակցութիւն չունենայ, այսինքն՝ զերծ մնայ ջուրին խոնաւութենէն։ Ծիշտ այս յատկութիւնը ունի Lycopodeի փոշին, զոր կարելի է ամէն դեղագործէ հայթայթել։

Այդ փոշին մաս մը հեղուկին վրայ ցանկէ յետոյ, ձեռքերնիդ կրնաք առանց երկիւղի ջուրին մէջ խօթել, վստահ լինելով թէ պիտի չթրջուի:

Lycopodeի փոշին ներկայ պարագային մէջ իրական ձեռնոցի մը դերը կը կատարէ մեր ձեռքին համար, եւ ջուրը չի կրնար որ եւ է ազդեցութիւն մը ներգործել մորթին վրայ:

Սոյն երեւոյթին կը հանդպինք բազմաթիւ եւ լողակոտուն թռչուններու քով, որոնք ջուրին մէջ ընկղմած ատեն, բնաւ չեն թըրջուիր, վասն զի անոնց փետուրները ճարպային մասնաւոր նիւթ մը կարտադրեն:

Գ. Փ Ո Ր Ձ

Կոսրած շիշը.

Ի՞նչ եղանակաւ կարելի է կոտրած շիշի մը բերանը հաւասար ուղղութեամբ կտրել:

Ասոր համար շիշը իւզով լեցնելու է մինչեւ այն բարձրութիւնը, ուրկէ կուզէք որ շիշին բերանը հաւասարապէս կտրուի: Հորիզոնական սեղանի մը վրայ զետեղեցէք շիշը, եւ կարմրաչէկ երկաթեայ ձող մը կամ տաքցած ունելիի մը ծայրը յանկարծ իւզին մէջ խօթեցէք. մի եւ նոյն վարկեանին՝ ճարձատիւն մը պիտի լսէք, ստուգելով թէ շիշը ձիշտ հեղուկի մակերեսի գծին ուղղութեամբ կտրուեր է:

ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

ԳՐՈՒԱԳՆԵՐ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆԸ

Պերպերեան տար ազնիւ Ռեքեոս, Անխոնց հասնող մը թէ հոն եւ թէ հոս, Որ իբր ուսուցիչ եւ իբր մանկավարժ Դպրոցն իր պահէ հաստատուն, անշարժ:

Թաշմեան Լեւոն, հսկողն ընդհանուր, Ամենին երբ տեսնես, կը հարցնես «ան ո՞ւր», Քաշուած կ'աշխատի իր փոքրիկ սենեակ, Փիլիսոփայի նիւթերով ցամաք:

Կրօն լեզուագէտ Երուանդն Անդրեաս, Յրանւերեկի սեղ անդրին է աւ, Որ գրագէտին ! ? Գրիգոր Մաշխաս Գոչեց երեսին, «Որո՞ւ հետ խաղաս»:

Զեքի Կարապետ սահկաքանը մեծ Որ այս հեշտ լեզուն մեր մէջ տարածեց Տահկաքաններու մէջ անուն հաներ, Ունի շատ մըն ալ գիրքեր եւ սաներ:

Ո՞վ գիտուն խորհող, խոժոռ անմայուն, Պիտի գովել քեզ, որչափ փախչիս դուն, Բոլոր գիտուններ կը կոչէ ասեան Մրցելու համար սա Ի. Մուրատեան:

Քաբրիս գեղագիր Թահտաճեան Խաչիկ Որ խոնարհութեան սակ կ'ընես պաճիկ, Գիտնալ գովեսին կը մեծես քրտակ Բայց քու անունին ալ պէտք էր պրտակ:

Մուրատեան Տիրան որ ինծի կարծես Մրդողեր քիչ մը նախորդ ըսածես, Բայց ան որպէս զի չպահէ ինձ քեզ Ըսեմ թէ աղուոր գիտէ Անգլերէն:

Հապա Աւետիսը մեր Առանձնար, Որուն դիմացին անբարեւ անցա՞ր, Ա՛յ յոյսդ կտրէ, չէ քեզ քարեկամ Պատահումն քեզ եղեր էր անկամ:

Մեր քուսքանը Գավաճ Գաբեգին, Որուն գրչին սակ թիւեր քեկքեկին, Երբ իրեն հարցնես կա՞յ շաւ ուսուցիչ, «Ես» պատասխանէ շեշտով պակուցիչ:

Յովսէփ Ճեւալը, յաջողակ chimiste Որ միշտ կ'աշխատի չի սիրեր հանգիստ, Կայսեր. Լիսեի մեծ վարժարանի Դաստատուներէն մէկն է անուանի:

Արմենակ Ինճեճ լեզու, փաստաբան, Որ ուսուցիչ մ'է խիստ պատաստաբան, Աշակերտներու կը ջանայ զխոն Խօթել իրաւանց սահմանը եւ հոն:

Գեղարուեստի մէջ փայլի գերք ճրագ Այս յուրջ պատանին Տիրանը Զըրագ Հեղինակ ալ է «Ներաշխարհ» գրքի Որ սակայն մամշոյ սակ կը տապրչկի:

Իւդանկարիչն Յակոբեան Սիմօն
Ձեռքին մեջ սեղմած քապո մը մինեօն
Օժանդակութեամբ ներկերու խաւին
Բաներ մը կ'ընէ վրայ կրտսին:

Երիտասարդն ալ Ձեռքիւրեան Տիգրան
Արքիսքի մագով, երեսով ծիրան,
Թեւ Թաշնեանէն՝ հսկող ապա գայ
Բայց մեկ խոսմանից ունի ապագայ:

Ձեռարուեստագէտ Խաչիկն ինկիլիզ,
Բերնի յանգերզն է « լոռէ սիրելիս », ,
Աշակերտներու հետ չարանընի,
Քիչ մը չափազանց ձեռքով կը վիճի:

Ս. Բաբելեանը, նուագի մոլորն,
Շատ աղուռ կածե դաշնակ մանօղին,
Մարդեան Ա.ին նուրբ մասներու սակ,
Գարծես կեանք առած դայրայի ջուրակ:

ԳՍԼՈՒՍՏ ՆԱԶԱՐԵԹԵԱՆ

ՄԵԼԱՆԻ ԲԻԾԵՐ

Վարդապետը կը յուզուի, վարդապետը
յուզուեցաւ, եւ խօսեցաւ իր ամենէն պեր-
ճախօս քարոզներէն մին՝ որոնց նմոյշը կը
պակսի իր ամբողջ « Քարոզագրքին » մէջ,
եւ որ անշուշտ պիտի զարդարէ յառաջիկայ
« Լոյս » ի թիւերէն մին, Այնքան տրամաթիւք
révelation մը ըրաւ վարդապետը, միջնադար-
եան ճգնաւորի մը ջղաթունդ յուզումովը եւ
ժողովուրդը որ բարեպաշտական քրտինք կը
թափէր եւ որ եռաձայնին դաշնակութիւննե-
րէն կը թովուէր, վարդապետին որոտում-
ներէն զգլխուեցաւ: Եւ կըսենք թէ մեր
վարդապետները — մանաւանդ Արմաշական-
ները — կը ներկայացնեն կրթեալ եւ տիպար
կղերականը, որոնց դատը պաշտպանեց Տօքթ.
Թօփճեան, ձանձրոյթը յանձն առնելով
թուումն մասանցը ընելու իրենց բոլոր տիտ-
ղոսներուն, զանց ընելով սակայն անոնց շա-
տերուն անունին առջեւէն կարեւորագոյն
noticeները:

* * *

Սա թաղականները ինչ հնարամիտ մար-
դիկ են: Անոնք են աշխարհիս ամենէն մեծ
inventeurները պիտի ըսէիք արդարապէս:

Մարդիկը ոչինչէն դրամ կ'ստեղծեն, խեղճ
ալըմիստներ, երբէ՛ք, չի մտածեցին թէ
բարեպաշտութիւնը միայն կարելի է առանց
քիմիական երկար բարակ formulներ փորձելու,
ազնուագոյն, հնչուն մետաղի վերածել:

Իզմիրի մէջ եկեղեցիի մը թաղական ա-
ղաները « պէքեար աղջիկներու խրամէթները »
բացուելուն համար, ժամուն մէջ նուիրահա-
ւաքութիւն ընելու ելեր են, մինչ Ղալաթիոյ
Խնամակալութիւնը պնակներու ժողովուրդին
մէջ չըջագայելը դադրեցնելով հասոյթի նոր
եւք մը կը փորձէ առժամապէս: Մայր
եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդը կանանց եկե-
ղեցին կը փակէր, աւելորդ ծախք չընելով
քիչ մը դրամ խնայելու, շատ մը թաղական
խորհուրդներ վարժապետներէ բռնի իւղա-
գին կը պահանջեն եւ Կէտիկ-Վաշայի վար-
պետորդի թաղականներն ալ վարժապետ-
ներու յետնեալ ամսականներէն կարեւոր
գումարներ կը զեղչեն, եւ չորից-թաղից
Աղքատախնամն ալ լրագրաց մէջ « խըզը
ճէօմէրտութիւն » մը կ'ընէ պնակ չի պտըտ-
ցնելու ... Բայց անմիջապէս կը զղջայ, եւ
թղթակից մը, որ անպատճառ թաղականցու
մընէ փոխանակ պնակ չըջագայեցնելուն հեղու-
թիւնը կրելու տարին 52 կիրակի՝ կառաջարկէ
որ ժամուն մէջ պաշտօն առնուն վարագործին
դռնբացէքի հանգէսէն եւայլն. Շիտակը ան-
նըման գիւտ՝ մտածումը սա իզմիրի չեմ
գիտեր որ Թաղ. Խորհուրդին եւ անոր մի-
ամուռկ տէրտէրին, որ անշուշտ իբր նո-
րութիւն եռաձայնէն աւելի տարածում պի-
տի գտնէ, ինչ ընէին մարդիկը, տեսնելով
որ թուզերը կը հասունանան, չամիչի մեծ
սպառում կ'ըլլայ իրենց մօտ, եւ դեռ աղ-
ջիկները տունը կը մնան en stok, դիմեցին
բնութեան արարչին . . . թէ ինչո՞ւ ստեղ-
ծեր է սա հարսնցու աղուորիկ աղջիկները:

Բայց ըստ իս, լաւագոյն չըլլար որ եր-
կինքէն պատուհաս խնդրէին Ալփիարին հա-
մար, որ իբր մեծ դրագէտ, գրեց « Արամիկ »
« թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար » ը, եւ որով
երիտասարդութիւնը կը մղէ դրամով հրա-
պոյրներ վայելելու, աղուոր ծննդներ ու-
նենալու, եւ կամ գլխէ հանելու սպասուհի-
ներ կամ դրացի համեստ օրիորդներուն հետ
cour ընելու:

Այդ իւրը, մոմը վառելու է նաեւ քիչ շատ ամէն տեղ՝ Մագթադինացիի առջեւ, որպէս զի աղջիկներ օրինաւոր խըւմէք զտնեն, կիներ՝ ամուրի կղերականներէ օձիքնին ազատեն, կոյս actricներ չի հրապուրուին Թօլայեանի ներդաշնակ քառեակներէն, եւ վահան փափազեան՝ միշտ կնիկներուն երեսին չըսէ. « քա, անո՛ւշա, քեզ աղեկ մը տեսա՞յ քի տահա » եւ չի մարմրի:

Գիտէ՞ք թէ, ո՛հ, այս գարունը որչա՛փ անհրապոյր պիտի անցնի, ո՛չ սոխակը երգ, ո՛չ Մօտան՝ սիրոյ մրմունջներ, ո՛չ Ալէմ-տաղիի պուրակները, ո՛չ ալ կիներու գլխարկներուն ծաղիկները՝ Թարմութիւն պիտի ունենան, ո՛հ, ո՛չ, մի՛ կարծէք թէ սակայն ասով կը պնդեմ թէ Լամարթին ոչ-բընապաշտ դպրոցին կը պատկանի ըստ Գրիգոր Մալխասի, ո՛չ, այլ թէ ալ զոյգ զոյգ նշանածներ չի պիտի տեսնէք ո՛չ հոս, ո՛չ հոն եւ ո՛չ մէկ տեղ, թեւ թեւի պտոյտի ճեմավայրի մը մէջ, ո՛չ ծունկ ծունկի նըստած հանրային պարտէզի մը մէջ, ո՛չ ալ թէ թա թէթ շողենաւի վերնայարկը . . . երկու տարազոյգերու չուքը իսկ: Վերջապէս առանց սէրի, առանց սէռէնատի, առանց վայելքի դարուն, մինչեւ որ կարգադրուին, լուծուին ամուսնական խնդիրները:

Այս պատճառաւ Պատրիարքարանի պիւտճէն աւելի պիտի բացուի եւ քանի մը անպէտ պաշտօնեաներ ալ դուրս պիտի նետուին, քահանաներ պատիժի, փիլոնագրիկութեան չպիտի դատապարտուին . . . ապօրէն ամուսնութեանց համար, բայց մէկ մեռելի վրայ 100 հոգի պիտի հաւաքուին, եւ իրարու զլուխ պիտի պատռեն, մօրուք պիտի փետտեն « եղբարք ի Գրիստոս » թաղելու համար մեռել մը, եկեղեցիներու մէջ պսակի արարողութիւնը հազուադէպ բան պիտի դառնայ, թաղ. խորհուրդները, մը պիտի դառնայ, ժամկոչները, մանաւանդ կառապանները պիտի գանգատին եւ մոմեր-լուսարարները պիտի գանգատին եւ մոմեր-նին մարած պիտի ափսոսա՛ն այն օրերը որ 20 զրուշի մօմ չէին վառեր: Մինչ անդին Դատաստանական խորհուրդը քթիկ քթիկ գործունէութիւն մը պիտի ունենայ:

Երբ դեռ Արսէն վարդապետ կը պնդէ

թէ բժշկական վկայական պէտք է ունենայ ամէն ամուսնացու, ի՞նչ պիտի ընեն աղտոտ գարեջրատուններուն նուագող աղջիկներէն վարակուած երիտասարդներ, երբ օր մը յափրացած, պժգացած ըլլան այդ կեանքէն:

Տիկին Զարուհի՝ կնոջ առաքինութիւն կը յանձնարարէ, եւ բարոյական վսեմութիւն կը գտնէ կնոջ վերջին մէջ, մինչ ամենէն աւելի այրեր կը գանգատին իրենց պչրամոլ, թեթեւաբարոյ, անհաւատարիմ կանանց համար, եւ կը դիմեն Դատաստանական խորհուրդին:

Թէեւ այս հետեւողութեամբ ցանցառութիւնով օրիորդներ ալ — անվիճելի ճաշակով մը — կը բաղձան ընտրել այնպիսի ամուսիններ, որոնք կը մարմնացնեն բաւական մը տգեղութիւն, բաւական մ'ալ թերութիւն, անձնուիրութեան մեծը ու գերազանցը գտնելով ամուսնական կեանքին մէջ: Կարծես ասոնք գթութեան քոյրեր ըլլային:

Վերջապէս այն օրէն ի վեր որ աղուոր կնոջ մը հուրի ներկայութենէն յուզուած մեր սիրելին Քասիմ, նուիրեց իր պաշտպանողականը, լքուած, ամուսնալուծուած կնոջ պարկեշտութեան պահպանումին համար եւ անոր կրկին ամուսնութիւնը միակ դարման մատնանչեց, ամենայուզիչ չեշտով մը ուղղելով զայն էջմիածին Ս. Կաթողիկոսին նկատառութեան, թէեւ աջէն ու ձախէն հակառակը պնդելու ճիգեր ըրին, եւ հիմա դեռ շատեր կ'սպասեն իրենց առաջին, երկրորդ կամ երրորդ « մեծ-Այո » ըսելու համար իր խոստացած plaidoirieին նպաստաւոր ելքին որ դեռ ի լոյս աշխարհ չ'է եկած:

ՍԻՐՎԱՐԴ ՍԻՐՈՒՆԵԱՆ

ՅԻՐԱԻՑԱՆ ԽՕՍՔԵՐ

ՈՐՈՆՔ՝ ՊԱՐԱՊ ԽՕՍՔԵՐ ԱԼ ԿԸՍՈՒԻՆ

Կը մտածեմ ու կը խորհիմ, գրեթէ գանկըս ճաթեցնելու աստիճան, թէ երբ բազմաճայնագէտ տիրացու Զիլինկիրեան, մեր եկեղեցական երգեցողութեանց կանոնաւորման ու զարգացման մասին չունենար այն ջերմ ու եռանդոտ նախանձախնդիր ոգին,

ու չը բարեհաճեր Պոլիս գալ, երբ ամէն ինձմէ աւելի երաժշտական ճաշակ ունեցողներ, զինքը չը քաջալերէին ու պաշտպան չը կենային, երբ մէկ քանի առթիւսներ ու աւաթապետներ իրենց գործակցութիւնը ու աշխատակցութիւնը զըլանային, ու իրենց անձնական արժանիքը ռեկլամ ըրած ըլլալու համար նոյն իսկ եւրոպական բարձր ու զարգացած երաժշտութեան մը եռաձայնը խաղալիք ու խնդալիք ընելով՝ անոր արժանիքին դպչելը աչքերնին առած չըլլային, քանի որ խիստ հազուադէպ բան մ'է նոյն իսկ ամենամեծ արուեստագետի մը համար գըտնել այնքան ունկնդիրներու բազմութիւն մը, երբ համաբաւառն Տիւնպէկէիս Տիար Սըմբատ Քէսէճեան, (որուն երաժշտական տաղանդը սկսած է փայլիլ Սկիւտարի Զիֆթիկի պարտէզին նախկին հրկիզեալ թատրոնի փայլուն օրերէն), չի գար ու իր կաղ աւանակովը արուեստագետներու խումբին չի խառնուէր, ո՛հ այն ատեն ո՛վ ամենաբարիդ Աստուած, որ քու զանազան ու զարմանազան ստեղծագործութեանցդ մէջ շատ մը ինչեր ստեղծած ես, արդեօք ի՞նչ պիտի ըլլար, ո՛ր պիտի երթար մեր եկեղեցական երգեցողութեանց վիճակը, եւ ի՞նչ պիտի ըլլար փոխան մէկ կամ երկու ձերմակի հասկըցած կամ չհասկցած նիւթերնուն վրայ մեքսիկներ գրող յօդուածագիրներուն հալը, եւ ծառանիդ՝ որ երբէք պարապ խօսքերու առիթը չի փախցներ, արդեօք ինչե՞ր պիտի ըսեր փոխան այս ըսածներուն, եւ տակաւին ինչեր պիտի ըսէ երբ առիթը ներկայանայ, ուրեմն փառք քեզ տէր Աստուած մեր, որ պարգեւեցեր մեզ, սօն սխարեւ ու նուիրօքս առ իշի տիրացուներ ալ:

X

Եւ երբ կարդացի սիրելի հեմշերիս ծանօթ զաւելչագիր Տիար Վահան Փափագեանի կանանց յատուկ պաշիկի մասին գըրած արգելիչ յօդուածը, յանկարծ շրթունքներս սկսան կարմրիլ ու բոցոտիլ, աչքերս մթազնեցան, սիրտս սկսաւ ուռիլ ու բաբախել, աղիքներս գալարեցան ու պիսիւն պիսիւն եղան, ծունկերս կթոտեցան, երեւակայութիւնս խանգարեցաւ, գլուխս սաստիկ ցաւ մը առաւ, ունեցածիս չափ

խելքս սկսաւ դառնալ, ձեռքերս սկսան դողալ ու ջերմ բռնողի պէս եղունգներս սկսան կապուտնալ, լեզուս բերնիս մէջ թալալալ լըխի դարձաւ, դէմքս այլագունեցաւ, աչքերս նուաղեցան ու սկսայ մահմուդ պախշըլը ըլլալ, թոքերուս սեւը ճերմակին խառնուեցաւ, շնչառութիւնս կարճեցաւ, մազերս ցցուեցան, կոկորդս սկսաւ այրիլ, թուքս բերանս ցամքեցաւ, եւ դեռ շատ մը բաներ եղայ, որոնք պօշպօղազուրիւն ըրած չըլլալու համար աւելորդ կը համարիմ հոս մէկիկ մէկիկ ըսել, վերջապէս ամբողջ զգայարաններս ընդ որս եւ զգացումներս չարժեցան ու այր իւրք եղան, ու բարկութենէս վրաս սանկ մարելիքի պէս բան մը եկաւ, եւ այս ամէն չարեացս պատճառը սիրելի հեմշերիս եղած ըլլալուն, իրաւունք ունիմ ըսել սիրելի հեմշերիս թէ՛ ո՛վ իմ սիրելի հեմշերիս, ինչո՞ւ այսպէս ամէն ատեն կընդունեալ ամէն բանին կը խառնուիս, ու պարապ տեղը անոնց հետ գէշ մարդ կըլլաս, միթէ չէ՞ եղած կին մը որ փոխան մէկ պաշիկի՝ Բերայի մէջ աբարթըմանի մը տէր եղած ըլլայ, արդեօք չըկան շատեր որոնք նոյն իսկ մէկ պաշիկի համար հոգինին կուտան, թէեւ ես, դուն, ան, ու Թողան, ու տակաւին շատեր կը մտածենք մեքայի մ'իսկ չտալ, սա գերազանց պատճառով թէ՛ դուք իբր Աղբատախնամ մարմին ու ես իբր տիրացու թերեւս ճրիի դրութեան աւելի վարուած ենք, Գանի որ տգեղ սեռին արգիլուած է համարուելով բարեւելը, ուրեմն ի՞նչ իրաւամբ կարգիլէք դեղձիկ սեռին այն աւանդական սովորութիւնը, մի եւ նոյն ատեն զրկելով տգեղ սեռը՝ վայելելու գէթ պաշիկներու շարուտութիւն քաղցրահնչիւն ձայնը, որ սոխակին ձայնէն ու Զրինկիրեանի եռաձայնէն ալ աւելի հեշտալուր ու հեշտաձայն է:

Շիտակը կարմրելով կը գրեմ այս տողերը, ու ամչնալէս այն աստիճան կը տառապիմ որ, ապահով եմ թէ վաղն առաւօտ իսկ ֆեֆս պիտի աւրեմ, ի մեծ ցաւ թախիծ ու տրամուլթիւնն ինձ մեղուցելոյս:

Մնամ

Սկիւտար

ԵՐՄՈԳ

ԳԼԽՈՒՍ ԵԿԱՄՆԵՐԷՆ

Երբ Բերայի շիտակին վրայ թիթեռնիկ օրիորդներու յօտուի բռնուած շոգենաւի մը պէս զարնուելով կը քալէի, գիտէ՛ք ի՞նչ կը մտածէի:

Կը մտածէի թէ՛ քթիս տակէն տէր ուղորմեա մուտալով, սա դպրոցը ընկնէ՞ս ետք (ե՛րբ) ի՞նչ գործ ընեմ:

Թաղականի երեւոյթով, լայնքը եւ երկայնքը իրարու հետ շփոթուած մարդ մը քովս եկաւ:

— Տղաս դուն հայ ես:

— Այո, բայց ...

— Ո՞ր դպրոցէն ես:

— Այն ինչ դպրոցէն, բայց ...

— Աճապա տղաս, սանկ երկրորդական վարժարանէ մը ելած չնորհքով տղայ մը կը ճանչնաս:

— Ոչ, բայց եթէ գործի մը համար է, կրնամ ինքզինքս ամենայն խոնարհութեամբ քանտիտա ներկայացնել ձեզ, եթէ մերժեալու ...

— Փէք աղէկ, փէք աղէկ, գիտնական կերեւնաս կոր, ես ալ քեզի պէս տղու մը պէտք ունէի խանութս առնելու համար, վաղը Մահմուտ փաշա եկուր, խանութս հոն է, խօսիմ հետդ:

— Շատ լաւ աղաս:

Կրնաք ուրախութիւնս երեւակայել, լապտերով փնտռածս ինքնիրէն եկած էր:

Չերկարեմ, յաջորդ օրը, առտուն կանուխ հօրմէս քսաննոց մը փրցնելով՝ շունչս շիտակ յիշեալ աղային խանութը կ'առնեմ:

Խանութը գոց է: Երկու երեք ժամ սպասումէ ետք խանութը բացուեցաւ, ապագայ բաթրոնիս կողմէ, ինչ որ սրտայուզում մը պատճառեց ինծի, ինչ եւ է, օգնեցի մարդուն խանութը բանալու գործին:

Երկուքնիս ալ բաւական մը քրտնեղեալ խանութէն ներս մտանք:

Ապագայ բաթրոնս գլխարկը հանեց եւ ապառաժ գլուխը ճիւղէր թաւաւի թաշկինակովը սրբեց, քիթը խնջեց, յօրանչեց, դեռ ուրիշ բաներ ալ ըրաւ, եւ ժամ մը ետք զիս ոտքի վրայ տեսնելով՝ նստէ տղաս ը-

սաւ, շեշտով մը, որ «մի՛ նստիր» կը նշանակէ:

— Հիմա տղաս, խօսք առաւ բաթրոնս, նորէկ ըլլալուդ համար շաբաթը 15 շաբաթ տի տամ, ցերեկուան հացդ ինէ, մինչեւ տարեգլուխ, եթէ զիս գոհ ձգելու ըլլաս նէ, հինգ ալ վրայ կը դնեմ:

— Շատ լաւ աղաս, բայց ընելիք ... (սրտայուզումս օլօին 90 էր):

— Գո՞րծդ, դեցի քի ըսեմ, ես խանութին մէջ կը նստիմ միշտ, դուն ալ առտուն 12ին պիտի գաս եւ իրիկուան մինչեւ 12ը դրան առջեւ կենալով, հա՛ մուցայ, ցորեկը կէս սահաթ փայտոս ունիս, եւ կիրակի օրերը ազատ ես, ո՞ւր էի, հա՛, մինչեւ իրիկուն դրան առջեւ կենալով բոլոր շունչովդ պիտի պոռաս:

— Պուլուրը՛ն, պուլուրը՛ն, հազըր ուրուպալար, կիւզէլ գումաշլար, ուճուզ ֆիյաթ լա:

— Հէ՞ ...

Չմոռնամ կրկնելու որ մարդուկը երկրորդական վարժարանէ չրջանաւարտ կուզէր կոր:

Բերա

ԼԵՒՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ՆԱՐՏԻ ԽԱՂ

Երկուշաբթի Աստուածածնայ պահուցն առնուն Ո՞ր հով փչեց դեմքս քերաւ կայսառ ժպտուն, եւ շիֆ ու շէն ձիօրձի Թօփճեանն այն բոց ու կայծ:

Որ զիս բռնի բռնեց՝ նարսի մեկեկ յանկարծ: Չ'գիտեմ ինչպե՞ս սապեղուղումի կ'ոյսին այնպէս,

Որ իմ ֆառերս կ'ուսեմ գլխուն ուզածին պէս Բան գործ չ'ունիս ա՛յ դու նեւե կելա՛ կելա՛՝ Խըրսդ կելլայ, կանչես պոռաս, ֆանի փարայ Նա բարբիթան կառնե ֆա՛հ ֆա՛հ ֆեզ թողու բաց,

Դուն ալ հագար անեծք բալիկ, կոծե ու շաց, Շունչանորդի, խաղ մ'ալ չ'առի ըսի զարին, Եւ ըսկայ երկրորդ բարդի մ'ալ վերսին, Այն ալ չ'առնե՞ նա փառաւոր անծակ անծուկ, Անո՛ւշ ըլլայ, իրախըսալով ինձ կամացուկ, Բւժիծաղով կոսրտուելով վրաս խնդայ, Եւ զիս թողու ափ ի քերան ելնե երթայ

Հալէ

Կ. ԿԱՐԻԿԵԱՆ

“ՏԻԿԻՆ ԲՆԱԿԻՆ”

Տիկին Ռամելա, քսանը վեց տարեկան, գեղեցիկ կին մը, բառին կատարեալ առուժովը, ամուսնացած տարիէ մը ի վեր Միւսիւ Բօլի հետ, եւ կը բնակին Բերա:

Մ. Բօլ հակառակ ամուսնացած ըլլալուն՝ ու մանաւանդ գեղանի կին մը ունենալուն, կը շարունակէ իր ապօրինի կեանքը եւ իր հաճոյքի ճամբան, մեծ մասը գրեթէ կանցնէ հոմանուհիներու հետ:

Տիկին Ռամելա ամէն բան կռահած ըլլալով՝ ինքն ալ իր կարգին կը գտնէ երիտասարդ սիրահար մը, ու այսպէս այր եւ կին կը շեղին ամուսնութեան սուրբ կեանքէն:

— Ի՛նչ, կ'ըսէ, անիկա ուզածին պէս երթայ ուրիշներուն հետ ժամանակ անցնէ եւ ես անտարբեր մնամ, ալ անկարելի է, պէտք է որ ես ալ ունենամ իմ փափաքներս գոհացնող մը, ես ալ պիտի վայելեմ կեանքը ուզածին պէս, եւ կարծեմ ոչ ոք իրաւունք պիտի ունենայ զիս մեղադրելու:

Իրիկուն մը տիկին Ռամելա իր արդու զարդի սենեակը ելլելով պատշաճօրէն կը հագուի ու կը մեկնի տունէն, պատուիրելով սպասուհիին՝ Մարիամին՝ որ եթէ ամուսինը գայ ու զինքը հարցնելու ըլլայ, մօրաքրոջը գնաց ըսէ:

Անոր մեկնելէն կէս ժամ յետոյ՝ Մ. Բօլ տուն կը վերադառնայ ու Ռամելան փրնտոնելով՝ կիմանայ թէ մօրաքրոջը գացած է, ուստի լրագիր մը կ'առնէ ու Փօթէյլի մը մէջ ընկողմանալով կ'սկսի կարդալ:

Քիչ յետոյ տանը դուռը ուժգնօրէն կը զարնուի, ու Մարիամ քառթ մը ձեռքը վեր կը վազէ:

Մ. Բօլ պահարանը պատռելով՝ հետեւեալը կը լսի, կարդալէ աւելի.

« Սիրելի Ռամելա,

Մայրս կէս օրէն սաստիկ կերպով հիւանդացաւ, հիմայ կուշտին ցաւը սաստկացաւ, վիճակը յուսահատական կը տեսնեմ, աճապարէ եկուր, եւ թերեւս անոր վերջին վայրկեաններուն կը հասնիս: Մօրաքրոջդ

Աղաւնի »

Մ. Բօլ, պահ մը արձանացած կը մնայ:

— Թօհա՛ֆ, կ'ըսէ, ասոր մէջը գաղտ-

նիք մը ըլլալու է անպատճառ, ուրեմն Ռամելան զիս կը խաբէ, բայց այնչափ ստորնութիւն երբեք չեմ յուսար անկէ, եւ սակայն դժբախտաբար անոր մէջ բացայայտ իրողութիւն մը կը տեսնուի, Մարիա՛մ, Մարիա՛մ, շուտ վեր եկուր:

Սպասուհին սենեակ կը մտնէ.

— Հարցումներուս չիտակ պիտի պատասխանես, կիմանա՞ս.

— (Շուարած) այո՛, միւսիւ.

— Հաւ, ժամը քանիի՞ն Տիկինը մեկնեցաւ տունէն.

— Կարծեմ թէ տասը կար.

— Ուրիշ անգամներ ալ ասանկ դուրս կ'ելլէ՞ր.

— Երբեմն մօրաքրոջը կ'երթայ, ինչպէս որ այսօր ալ գացած է.

— Դուրս ելիր, կը գոչէ, կասկածի մը տեղի չի տալու համար:

Մարիամ սենեակէն դուրս կ'ելլէ ապշահար:

Ժամը կէսին տան դուռը կրկին կը զարնուի, եկողը Տիկինն է, որ չիտակ սենեակ ելլելով՝ ամուսնոյն դէմը կանցնի, ու անոր ներկայութեանը կամաց կամաց կ'ըսկսի հանուիլ:

— Բօլ, ինչո՞ւ համար մտածկոտ վիճակ մ'ունիս, նորէն բանի մը բարկացար չուկային մէջ:

— Բան մը չունիմ, Ռամելա, փառք Աստուծոյ, ի՛նչ կայ բարկանալու:

— Բայց ինչո՞ւ անանկ տխուր ես:

— Ռամելա՛, հիմա այդ հարցումները ձգէ, ըսէ՛ միայն թէ՛ ո՞ւր գացած էիր:

— Հա՛, մօրաքրոջս գացի, բարեւ ըրին:

— Աղէկ, չե՞ս մտածեր բնաւ որ ես հոս քեզի պիտի սպասեմ ճաշի համար:

— Այո՛ ... բայց ... մօրաքրոջս հետ սանկ քիչ մը պտտեցանք տէ ...

— Մօրաքրոջդ հետ մի՞ ...

— Այո՛, ի՛նչ կայ որ ...

— Ռամելա՛, ա՛լ հերիք է, ինծի մի՛ խաբեր ...

— (Դողդալով) կարծեմ պատճառ մը չունիմ քեզի խաբելու ...

— Ուրեմն, սա քառթը կարդա՛ ...

Տիկին Ռամելա քառթին պարունակու-

Թիւնը կարդալով՝ կիյնայ կէս նուազած ա-
թոռին վրայ:

Քիչ յետոյ խելքը գլուխը կուգայ:

— Մօրաքրոջդ գացիր հէ՞ ... վա՛տ ...

— (Արտաստեղծով) ածական մը որ քեզի
յարմար է, ինչու որ դուն ստիպեցիր, որ-
պէս զի ես ալ ուզածիս պէս կեանք անց-
նեմ, աշխարհը վայելեմ ...

— Ես մի՞ (մեկուսի) ի՛նչ ... արդեօք
ամէն բան գիտէ կոր հէ՞ ...

— Այո՛, դուն ...

— Սակայն ապացոյց ...

— Ահաւասիկ ապացոյցը, ըսելով կը բերէ
Փանէլա մը, որուն վրայ գրուած էր Փրան-
սերէն գրերով ANNA GUETTE եւ որ Մ. Բօլ
աճապարանօք սխալ հագած էր ...:

Մ. Բօլ ամօթէն կաս կարմիր կտրած.

— Ներէ Ռամելա՛, կ'ըսէ, ու ծունկի
գալով կը քաշէ անոր ձեռքը ու ուժգին մը
կը համբուրէ, ներէ ինծի՛ որ երբեք քեզի
արժանի ամուսին մը չ'եղայ, ես տեղի
տուի որ դուն ալ չեղիս ամուսնական սուրբ
ու նուիրական կեանքէն, եկուր ուրեմն եր-
կուքնիս ալ երդում ընենք, որպէս զի ասկէ
վերջը այլ եւս միմիայն իրարու համար սիր-
տերնիս բարախէ, միմիայն իրարու համար
ապրինք:

ՆԵՐՇԱՊՈՒՋ

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Համեստունի դագերանի

անուշիկ աղբատիկա,

Այս շարտըուան հօտածովս էրուսաղէմ
երթալս պիտի գրեմ:

Քա ճանըմ օրտդի, էտմիշ տարի է ի վեր
էրուսաղէմ երթալու արգու ունէի, ինչ ըրի
չըրի վեց հատ արծաթ թգալներս, զիւմրիտ
մատնիս ծախեցի, կեսուրոջս տալոյն խընա-
մին թօռանը կնկահարին աղբօրը փեսան
կարգուեցաւ, մէկ ամսուան փեսայ էր է-
տէպսիզ Թաքուհին սէտալամիշ էղեր էր
ինծի եկան, պաղեցունելու համար պիւիւ
ըրի 100 ղուրուշ արի, անոր ասոր տրսէվէի
իւլաներ ըրի, թէմրէի աղթեցի, սարըլու
կտրեցի, մէնէ աղէկներուն թիւթսիւ տուվի,

խուրունճ կամեցի, հազար ղուրուշ թօրեցի,
էրուսաղէմ ճամբայ ելայ:

Քա սուրատներդ ուտեմ, անուշիկ աղ-
բարիկս, կը հասկընաս կոր ինչ պիչիմ պէ-
ճէրիքի կընիկ ըլլալս:

Խնկոտ Ֆուլիկ կըսեն, վեց հազարեայ
կիտէ տէի ինծի չի հաւնիր, վայ կլխուտ ես
տապը հազարեայ գիտեմ, խնկոտ չուն, քե-
զիպէսները թուրքիս քիւպէն լահանայի պէս
լսկած կը հանեմ:

Օխ եա, քարը տէղը դըրի եայ:

Սնտուկս, եաթախս, վարօռին մէջի, ու-
տելիքս համալին կունակը տալուս պէս ըռըխ-
տըմը կացի, ույ հէմէն չառիւր կոտորի, վա-
րօռը ինծի չի պէքէած ելէր կացէր է, էր-
թէսի օրը պաշխա վարօռ կար ամայ, պիլէ-
թը ետ չարաւ, էկող բօստային կընայ ըսին
պէքէէցի ելայ քացի, քա օրտտի, աս վա-
րօռն ալ իսկէնտէրէի մէմէքէթը չէրթա՛յ
մի, վարօռը ախտարմայ պիտի ըլլայ եղէր,
բէչէրս սօդտեցի ելայ խապտանին վրայ քա-
ցի, խապտան աղայ ըսի, պէնի չիտկէ չի-
տակ էրուսաղէմէ գլխաթիր սուր Թակոր
վանքըն գարուսունուն էօնինէ կէօթիւրէճէք-
սին ըսի, քա ույ հէմէն չէնէնէնէր պոնուի,
Փինկ ֆօնկ ըսելով ինծի չախեց:

Էլանք իսկէնտէրէի մէմէքէթը, ան
քիչէրը հօնտէղ մը պառկեցանք, երկու օր
ախտարմա վարօռին պէքէէցի, տէղ չիյտէմ,
առապճայ չիյտէմ քի առ վարօռին տէղը
երթամ, քա եալրում շաշրմիշ ըրի մնացի,
Աստուած պանիկը աչօղէ Բօլատ էֆէնտի
կըսէն կոր, աղւորիկ կտրիճ մը էր, իմ հօն-
դէլիս մէջն էր, մանտամ ըսաւ, այս տեղ
էրուսաղէմին բօխանորդը կայ ըսաւ, քեզի
հոն տանիմ տէ անիկայ չիտկէ չիտակ կը
դրկէ ըսաւ, առապայ մը պոնեց, նոր հարսի
պէս այս կտրիճին քովիկը նստեցայ, ելանք
ճանբայ:

Քա ճանըմ օրդսի, առապայ նստելու
անանկ հալէս մը ունէի քի հալէսըս բորիս
մէջը մնացէր էր, Տէմիր խաբուի կրակէն
քսան տարի առաջ հարս եղայ, ան վախթը
Թօպ խաբու առապայ չի գար, ինծի տօլմա-
ճի տէր Թարուլիւնին իրիճկինը քօղկեց,
քօղքով Թօպ խաբուէն մինչեւ Խում խաբու
սիւտճիին պէկիրին պէս քալեցուցին, կէս

Ճամբան պարոնտատս մէղքըցաւ տէ ժամ,
կոչին շալակը ելայ, քա օրդտի, քալէլը շատ
աղէկ է, ան ժամկոչին հաստը սօքան կըռ-
նակը դրաւ երկու ձեռքովը պոնեց վրան
նստայ, տակիս օսկոռներս խուրտուխաշ
եղաւ:

Հէլէ առապա նստելու հալէսս առի:

Առապան չիտակ էրուսաղէմի մարդուն
տունին ռոջեւը կայնեցաւ, վար ինչանք,
ուշախը տուռը պացաւ, մէկ հատ խոշոր
տուն մը քի, մարդ մէջը խախա կըլլայ, այս
էրուսաղէմին մարդը իմին քիտաւոր ըլլալ
հասկըցաւ, հրամէցէք խաթուն չըսէ մի,
ույ հէմէն խասխաթի մնայ, ինծի պառաւի
տեղ դրաւ, ես տահա իրեն պէս քանի մը
հատ էրիկներ խողը կը դընեմ:

Հաճի աղա ըսի, Աստուած հաստատ
պահէ, էրուսաղէմին այս տունը ինչ աղւոր
է ըսի նէ, այս արառորպանը իմս է ըսաւ,
հէմէն արառորպանը Փռէնկէն են, աճէմէն
թարգմանեցի քի արառմիշ է ըրեր, քա
եազրում, ես խութումին օրը հաւկիտին
կանչեցի յիսուն հատ հաւկիթ առի, մէջէն
մէկ պզտիկ հաւկիթ մը չի կրնացի արարթ-
միշ ընել, այս խօժ խօժաման տունը ինտոր
արառումիշ է ըրէր:

Հաճի աղա ըսի, այս չափ հազարներով
վրաները ո՞րկէց վաստըկեցար ըսի նէ, ըսաւ
քի, ես կէլիպ օղլու հօրէնական այգիներ,
արտէր, տունէր ունէի, անոնք ծախեցի
չինեցի ըսաւ:

Էկէր սուտ է նէ իրաւ ըլլայ ամայ, իմին
թէյզէի աղջիկանը պարօնտաւորն աղբօրը
աղջիկանը սանամարին տային տղուն կըռ-
կահարին կնկանը սանամարին տղուն օր-
դախը կէլիպօղլուցի էր, հէմ ալ անտէղին
ամէնէն զէնկինն էր, մալէրը ծախելու գը-
նաց, քանի մը հատ պաղէր, պաղճանէր,
տուններ, խանութներ, ասոնց անմէնքը իրեք
հարուր ոսկի անճախ բռնեց: Առաջ իմ խել-
քըս չի հասաւ ամայ, սօղրայ հասաւ, գըլ-
խաթիրին զօրքին մեռնիմ, հրաշքը ցուցու-
ցեր էր:

Արառորպանը քացինք նէ ոտքի վրայ կը
պըտըտէր կոր, ամայ բէկ կէշ հիւանդ էր,
հաճի աղա ըսի, ինչու ոտքի վրայ կայներ
էս, նստէ ըսի նէ, ըսաւ քի կամ պառկելու

էմ կամ կայնէլու էմ, չեմ կրնար նստիլ,
ինչու տէի հարցուցի նէ, տակս Փիստուր ե-
ղեր է ըսաւ, Փռէնկէն թարկմանեցի քի
հեռու ըլլայ տունէ տեղէ մատեաի կէշ եա-
րայ է եղէր:

Հիմայ հասկըցակ, Սուրբ Գլխադիրին
ստակները արառումիշ ընողները տակէրին
ասանկ եարայնէր կը հանէն տէ արառումիշ
ըրած տունին վրայ չեն կրնար նստիլ, չեն
կրնար ժառանգէր:

Մեղքըցայ տէ մատեայի իլաճ մը թա-
րիֆ ըրի, չուգեր, հիմակու հիմայ բժիշկ-
ները ճէհէլէմ թաշիեօվ կէրէն կոր ըսաւ:

Օխ ըլլայ ըսի միտքէս, մինակ դժողքին
քարերովը էրիս նէ խալէ էղիր, կրակներով
ալ պիտի էրիս: ԹԱԼԻԹԱ

Ա Ս Ի Ս Ն Ե Ր Ը

Ահա եկաւ ցրասարսուն ծեր Յունվար,
Պիսի իջնէ այս ջուրերուն դեռ հուն վար:

Կը յաջորդէ անոր սասիկ Փեւրվար,
Քահանային ձեռք չի բռներ խաչ, բուրջաւ:

Գարուն եկաւ մեզ աւեւեց արի Մարս,
Ա՛յ ցուրտ ու սափ իրարու դեմ մղեն մարս:

Կը կանաչնան ծառ ու սերէ երբ Ապրիլ,
Կ'ուգայ, եւ մարդ երկար կ'ուզէ դեռ ապրիլ:

Ահա՛ եկաւ ծաղկոտ, աղուոր սա Մայիս,
Ծոռում, գեռում, աչիկ չ'ոգնի երբ լայիս:

Կը հասունանաւ արեւը երբ գայ Յունիս,
Կ'ուրախանաս, եթէ մարգ, արտ տուն ունիս:

Ամէն տեսակ պտուղ կուտայ մեզ Յուլիս,
Սակայն սափէն անտանելի կը ծուլիս:

Գիւղացին ալ կուտայ երբ գայ Օգոստոս,
Ծպուռին պէս գլխավար ու տկոս:

Բերաւ իր հետ անձրեւ ու հով Սեպտեմբեր,
Կի՛ն՝ անուսնին կը պատուիրէ պաշար բէ՛ր:

Էսնափին շաւ օրեր կուտայ Հոկտեմբեր,
Բայց հորիզոնը կը ծածկեն մութ անպեր:

Ցուրտ կը տեղայ ձիւնն ալ հետք Նոյեմբեր,
Դե՛րձակս ըսաւ, հի՛ն վերադուր ճորտ բեր:

Մեր տարիին վերջին շունչն է Դեկտեմբեր,
Ու մե՛նք ճորտն կը սպասեմք ալ անհամբեր:
Կարէ՛ն ԳԱԼՈՒՍՏ ԿՈՄՍԻ

ՏԻՊԱՐ ՓԵՍԱՅ ՄԸ

ԵՒ

ՏԻՊԱՐ ԵՂԲԱՅՐ ՄԸ

Մեկիտոս աղան իր մէկ հատիկ աղջիկ զաւակը ամուսնացուցած էր՝ իր երբեմնի գործի ընկերոջ Կոմիտաս աղայի տղուն՝ Պաղտասարի հետ:

Մեկիտոս աղան ինքնին կը սիրէր Կոմիտաս աղան, չօգ նազիկ ատամ տըր կըսէր, էչ, տօսթ, էհպապ ուղուրունա օլուպ օլան՝ ճասը ֆէտա էտէր, կիւզէլ կիւզէլ եէր, եէտիրիր, կիւէր, կիւտիրիր, հասըը զէվզ ու սէֆա իչին եարատըմըլ պիր ատամ տըր, օղու իսէ ... աւանակըն պիրի, պիր սէլամ վէրմէնին եօրունը էրքեանընը պիլմէզ, սապահ գարանըղըն տիւքեանա, ազլամ 12տէ տօղուռ էվէ, էօյլէ գահվէյէ կիթսին, մէյ-խանէտէ պիր իքի էհպապլա օթուրսուն էյ-լէնսին ... նէ կէզէր, աւանակըն պիրի, ամա նէմէ լազըմ նիհայէթ կիւվէյիմ տիր, պիր շէյ տիյէմէմ: Ազլամլարը պարէ էրքէն էրքէն էվէ կիտէրսէ, էվտէքի զէվալլըլարը օլուն շէնլէնտիրսին, մէսէլա եազ տըր, կիւզէլ պահչէլէրի վար, ըազը թէփսիսին տիւզէթտիրսին, պիր աղաճըն ալթընտա օթուրսուն, թօփլասըն շօճուգլարը էթրաֆընա, կիւզէլ զէվէ էթսին, եէսին, իչսին, կիւլին, կիւտիրսին, պապասընըն կէլէճէք վազթընա գատար էյլէնսին, էյլէնտիրսին, օլմա՞զ մը, խայըր, աւանակ կիպի պիր մախլուգ, ամա կէնէ պիր շէյ սէօյլէմէմ: կիւվէյիմ տիր, գըզըմըն խաթըրը վար, կիւվէի էվլատ տէմէք տիր: Պէ հէյ աւանակ ... թօա՞ֆ շէյ ... կէլտէ սէօյլէմէ ... ամա կէնէ սէօյլէմէմ ... կիւվէյիմ տիր, ազլամ օլտո՞ւ մը, էվէ կիթտի՞ մի, աճէլէ՞ սօյուլընը, կէճէլէք էնթարիսինի կիյէր, պիր սատէ գահվէսի վար ֆըրթ, ֆըրթ իչէր, սօնրա ալըր ալթարհաբար պիր քիթապ էլինէ, կէչէր սէտիրին պիր պուճաղընա, շէվիրիր եիւզիւնի տիւվարա, ասար պաշընը էօնիւնէ, պաշար պըտը՝ պըտը՝ պըտը՝ պըտը՝ պըտը՝ օգուճայա, ամա գաչ սահաթ ... պապասը պէրիտէ կազինօտա քէֆինի թամամատըգտան սօնրա էվէ կիտէր, պազար պիրի պիր

պուճաղտա մզկանլանմըլ, օպիրիսի պիր եէրտէ ույուր, սէս վէրիր, կէլինինէ՝ զօճասընըն նէրտէ օլտուղընը սօրար, շօճուգ տա, հայրի՛կ, վերն է, եկածէն ի վեր կը կարգայ կոր, ամէն իրիկուան ըրած պանն է չիյտե՞ս: տէր տէմէզ՝ պապասը խույլանըր, պաշար էօքիւզիւնի, աւանակընը պիր էթմէյէ, պէնտէ խըրս տույարըմ էթտիրինէ ամա, պիր շէյ սէօյլէմէմ, չիւնքի կիւվէյիմ տիր, կիւվէյի էվլատ տէմէք տիր:

Շիմտի պիզ պիզէյիզ ա՛ ... պապասընըն տա հագգը վար, կէրչէ՞ք աւանակ տըր, ամա նէյիմէ՞ լազըմ ... նիհայէթ կիւվէյիմ տիր, գըզըմըն խաթըրը վար ... Ուզաթմայալըմ եէմէքլէրինի եէրլէր, պիզիմ Կոմիտաս աղա, նարկիլէսինի գուրար, պաշար կիւզէլ կիւզէլ սէօյլէմէյէ, կիւէր, օյնար, պիզիմ կիւվէյի իսէ ... կէնէ պիր շէյ տէմէմ, նէյիմէ՞ լազըմ, չիւնքի էվլատ տէմիչիմ ... աւանակ կիպի եէմէյինի եէր եէմէզ՝ կէօզիւնի գարար, պապասը խըրպանըր, ծօ՛, ատամ սըրասընա կէչ տէ պիր ազ օթուր, լաֆ էթ տէր, ամա՛ն, պապա սիզ քէնտի ըահաթընըզա պազըն տէր, վէլօգմա աղզընտա չիւլէյէրէք կիտէր եաթար: Հէլէ օ անասը օլաճագ ճատը՝ ... օղունտան պէչ պէթէր խոտպինին պիրի ամա, կիւվէյիմ հէր նէ գատար աւանակ իսէ, գարըսընը էյի պազար, պիլմէմ, տայիմա իչլէրինտէ տէյիլիմ ամա, զանն էտէրսէմ գարըսընա ո՛ւֆ տէտիրտմէզ:

Մեկիտոս աղան մանչ զաւակ մ՛ալ ունէր, պարկեշտ, բարեկիրթ երիտասարդ մը Գէորգ անուն, իբր 26—27 տարեկան, որ հօրը գործերը կը վարէր եւ որ չարաթը անգամ մը քոյրը անպատճառ տեսնելու կերթար Կոմիտաս աղայի տունը:

Վերջերս կիրակի օր մը առաւօտուն Պ. Գէորգ իր քրոջը այցելութեան կերթայ: Դրան զանգակը մասնաւոր կերպով մը կը հնչեցնէր որմէ հասկնալով քոյրը կը փութար դուռը կը բանար եւ կը դիմաւորէր իր սիրակա՛ն հարազատը:

Պ. Գէորգ նոյն օր դրան առջին շատ մը սպասելէ եւ դրան զանգակը քանի մը անգամներ հնչեցնելէ ետք երբ կը պատրաստուէր ետ դառնալ, կարծելով որ դուրս ելած

տեղ մը գացած ըլլան, դուռը բացուեցաւ եւ Պ. Գէորգը ներս մտաւ:

Զարմացաւ երիտասարդը երբ քոյրը չի տեսաւ, եւ անունը տալով՝ սկսաւ սանդուղէն վեր ելնել, երբ քրոջ կեսուրն սանդուղին գլուխը դիմաւորելով՝ զինքն ուրիշ սենեակ մը առաջնորդեց:

— Ո՛ւր է Մաքրուհին, հարցուց Պ. Գէորգ, եկեղեցի՞ գնաց ... ո՛ւր է:

— Ձէ՛ ... հոս է, կտորճիկ մը քէյֆ չունի, քանի մը օր կայ պառկեր է, պէսպէսլի ես ֆուլերէնցա է, ես քէսկին նէվազիլ:

— Քանի՞ օր է հիւանդ է:

— Էյ չիյտէմ ամա շաբաթ մը ըլլալու է:

Երիտասարդը անմիջապէս ոտք ելաւ եւ շիտակ քրոջը սենեակը վազեց, մինչդեռ ջատուկ կեսուրը ետեւէն կը պօռար:

— Կէորգ, եա՛վրում, քովը մերթար, գիշերը տիօր լուս տապլէ տապալ եկաւ, նէ՛ քնացաւ նէ՛ քնացուց, հիմա փտորճիկ մը կը քնանայ կոր նէ՛ քունխուրտուկ մընէր, կէշ կըլլայ:

Երիտասարդը առանց մտիկ ընելու վեր ելաւ, բացաւ կամաց մը քրոջը սենեկին դուռը եւ յուշիկ քայլերով մօտեցաւ հիւանդին եւ սկսաւ վրան նայիլ անասելի տըրտմութեամբ:

Տաքութիւնը յոյժ սաստիկ էր, եղբայրն զգաց թէ քոյրն այն հրատանջ ջերմութեան մէջ առաւել կը տոջորէր կը տագնապէր քան թէ կը քնանար, բոլորտիքը նայեցաւ, սեղանին վրայ դեղի չիլ մը, դեղահատերու տուփ մը, վերջապէս բան մը տեսնելու համար, եւ երբ դեղի վերաբերեալ բան մը չտեսաւ, խելքը գլխէն գնաց, իջաւ կամաց մը դարձեալ վար, հարցուց կեսուրը թէ՛ ո՛ր բժիշկը կայցելէ եւ թէ դեղ մը բան մը առնուած է:

— Տահա էրէկուան օրն էր, երբ տաքութիւնը բէք շատցաւ նէ՛ տղուս՝ Պաղտասարին ըսի քի երթայ քէօշէյի պէրպէր Թադոսը կանչէ:

— Պէրպէր Թադոսը մի՛ ... է՛յ:

— Էյիսի սէն, մարդը եկաւ, իլաճ սալըն տուաւ, ամէնեկան մէկ թիւրլիսիովը ըրինք, էքսէ քէօքիւին հարտալ դրինք,

ճակտին թիրեաք քսեցինք, քիմեօնը ծեծեցինք քացախով խառնեցինք, օտկին տակերուն կապեցինք, տահա ի՛նչ ընէինք, եա՛վրում:

— Քա անօրէն մարդիկ, պէրպէր Թադոսը ի՛նչ գիտէ, ... ո՛ւր է սըվոր էրիկը, ... պէրպէր Թադոս ըսած մարդդ, թրաշ ընել մը պիլէ չիյտէ, շնորհքով հէքիմ մը չկրցի՞ք բերել, աղջկան հա՛լը հալ չէ:

— Պէրպէր Թադոսին չի հաւնեցա՞ր, պէնիմ տէյէն հէքիմէն աղէկ է, Բուբուլիկիս մատին տօլաման քի եաման բան էր, պէրէքեաթ վէրսին չի հաւնած պէրպէր Թադոսիդ քի, մէկ երկու թէրթիպով բիրիբաք ըրաւ: Ձէ՛ ... ի՛նչ կուզեն թող ըսեն, վարպետ մարդ է:

— Տղադ ատ մարդը հէքիմ տէյի առջին ձգեց տէ կնկանը բերաւ հէ՛ ... ա՛ջօլտուն:

— Տղաս ալ իրիկուն առտու կնկանը վերան երկերկու կըլոխ նարեկ կը կարդայ:

— Լինցաւ գնաց:

Ու բարկացած ոտք ելնելով՝ պատուիրեց որ իր գալը քրոջը չիմացնեն, եւ կէս ժամէն ետքը նորէն գալն յայտնելով՝ փողոցին դուռը բացաւ դուրս ելաւ:

Ուղղակի տուն գնաց եւ շիտակ մօրը սենեակը մտնելով:

— Մայրիկ, Մաքրուհին հիմայ քեզ կուզէ, չուտ մը հագուէ գնա՛ ժամանակ չանցուցած, քէյֆը քիչ մը աւրած է, թեթեւ էնֆլուէնցաի պէս բան մ'է վրան եկածը, ինչ որ է, ես հիմայ հետս բժիշկ մը առած պիտի գամ, նայէ որ Տօքթօրին հետ եկած ատեննիս դուն ալ հոն գտնուիս:

— Մաքրուհին հիւանդ է կ'ըսես, քանի՞ օրէ ի վեր հիւանդ է, ինչո՞ւ լուր մը չեն ղրկեր, ի՛նչ տեսակ մարդիկ են ասոնք, ես ալ գործի պատճառաւ այս շաբթու մէջ օր մը չկրցի երթալ ...:

Մայրն աղջկան տունը կը փութայ, եւ տեսնելով սիրական զաւակը ծանր վիճակի մէջ անկողին ինկած, կը յուզուի, կայլայլի եւ կսկսի լալ:

Միջոց մը խեղճ հիւանդը, անտարբերութեան դժբա՛ղդ զոհը կ'արթննայ փողոցէն անցնող կառքի մը դըրդիւնէն, եւ տեսնե-

լով մայրն անկողնոյն քով, կը ջանայ ժպիտ մը փայլեցնել դէմքին վրայ, եւ անով մեղմել մօրկանն իրեն համար զգացած անհուն վիշտը:

Շատ չանցած կուգայ բժիշկը որ հիւանդին վիճակը շատ ծանր գտնելով, կը յանձնարարէ մեծ զգուշութեամբ նայիլ, եւ տալիք դեղերը ժամանակին տալ, եւ իր այցելութիւնն ժամանակի մը համար օրը երկու անգամ անհրաժեշտ ըլլալն յայտնելով՝ կը մեկնի:

Մաքրուհիի հիւանդութիւնն ֆիւզիքը թիֆօյիտ էր, 40-41 աստիճան տաքութեամբ:

Կեսուրը երբ այս բանը լսեց, բժիշկին երթալէն ետք հիւանդին սենեակը մտնելով՝ մօրը.

— Քա կէնճա, քա իրաւոր պանիկ մը պիւ՛ն չի կայ, սիրտտ պօշ տեղը թունտ մի հաներ, քա կէրչէքտէնէ ուգա՞ էնք քի աղջիկինդ հէքիմսիդ ձգէինք, աս առտու մուծն ու լուսուն տղաս կնաց պէրպէր թաղոսը նորէն պերաւ, աղւոր մը նայեցաւ մարդը, չի՛ն մը շուրուպ պիտի չինէ, տղաս աս օր Ղալաթիային ժամը գնաց ըռածանի, ժամ տէօնիւշի շուրուպը հետը պիտի պերէ:

Մայրն աղջկան անհանգստութիւնն զգալով, խնդրեց կեսորովէն դուրս ելնել:

Բժիշկին դեղերը՝ դեղագործին աշակերտը բերաւ, քիչ յետոյ հիւանդին եղբայրը գալով՝ կամաց մը մօրն ըսաւ թէ՛ կին մը վարձած է որ հիւանդին ճերմակեղէնները լուայ եւ ուրիշ մանր մունր ծառայութիւններն ընէ, որպէս ցի ինք դիւրութիւն ունենայ միշտ քովը գտնուելով ժամանակին դեղերն առնել տալու:

Աղջկան հայրը՝ Մելիտոս աղան, իրիկունները իր յաճախած գինետունը նստած, մեծ մտահոգութիւններու մէջ օղիի շիշեր կը պարպեր:

Բարեկամները զինքն այդ վիճակին մէջ տեսնելով՝ քովը կը մօտենան, եւ տրտմութեան պատճառը կը հարցնեն:

— Սօրմայրն, կ'ըսէ, ամա նէ՛ ֆայիտէ, պիր շէյ տիյէմէմ, չիւնքի կիւվէյիմ տիր, էվլատ տէմիշիմ, էվէթ, էվլատ տէմէք ամա, պէն պէօյլէսինի մասօր կէօրմէտիմ, կատարեալ, գուսուրսուզ վէ տույկուսըզ

պիր աւանակ: Գարըսը թիֆօտան եաթըյօր տէ, վաղիյֆէսինտէ պիւն տէյի՛ւ, զէվալը չօճուղը քիւլանա աթմըշար կիպի աթէշէր իշինտէ գալրուլուպ չարչարուել օլույօր: Սօգագտա կէօրտիւմ, հասթանըն նասըլ օլտուղընը սօրտումսա, նէ՞ ճէվապ ալսամ պէյէնիսինիզ, նէվաղիլ օլմուշ տըր, պէրպէր թաղոսըն վէրտիյի շուրուպը իշմիշ օլսայըտը շիմտիյէտէք պիր շէյիսի գալմազ ըտը եա՛... պօշուզ էթտիլէր իշիրմէտիլէր: Պէն պէօյլէ աւանակ պու սիննիմէ կէլտիմ կէօրմէալիմ, նէ՛ ֆայտասը վար քի կիւվէյիմիզ տիր, պիր շէյ տէյէմէմ, պէրէքեաթ վէրսին պիզիմ Գէօրգ, ատէթ էթմիշ հէր բազար կիւնիւ գըզ գարտաշընը կէօրմէյէ կիտէր, պու բազար կիւնիւ սապահ էրքէն կիտէր, կէօրիւր քի վայ ագըլ եաթըյօր, չօճուղըն ագըլ պաշնտան կիտէր, պիրիպիրինէ կէշէր, հէքիմ կէթիրտինի՞զ մի տէյի սօրար էվտէքիլէրէ, գայնանասը՝ հա՛ եա, պէրիւք, պէրպէր թաղոսը: Պունու իշիտինճէ չօճուղըն թիւլէրի տիքիլիր, ճատըյը սօգաղա աթամազ տէրէճէտէ խըրսլանըր, նիհայէթ ուզաթմայալըմ, գըզ գարտաշընըն խաթըր իշին թընմազ, անասընը ալուպ կէօթիւրիւր, հէքիմ ֆիլան կէթիրիր, թէքար պիրտէ խըզմէթճի գարըր թութար, ալլահ իշինի գայըրսըն, ծօ էյէ՛ր խապէր ալմասագ, էյէր քէօյէ կիթմիշ օլսայըտըզ, աճապա գըզըղաղըմըն հալի նի՛ճէ օլաճայըտը, պիզիմ աւանակ կիւվէյինին էլինէ գայսայըտը չօգ ֆէնա օլաճաղըտը եալրուճաղըմըն հալի, պէօյլէ պիր աւանակ... ամա կէնէ պիր շէյ տէմէմ, չիւնքի կիւվէյիմ տիր... Աւանակ... Գարըսը օ՛ հալտէ տէ, տէմէմիշ քի պիր հէքիմ կէթիրէյիմ... թո՛ւհ:

Բարեկամներէն մէկը.

— Մելիտոս աղա, հէքիմ կէթիրմէմիշ մի, պէրպէր թաղոսը տէֆ էթ, օ պէրպէրլիքտէն պիւն անլամազ:

— Իքի սահաթ տըր լաֆը քիմէ՛ էտէյօրըզ... նասը՛ հէքիմ... պէրպէր թաղոսը տա անասը տէմիշ քի կէթիրմիշ, քէնտի տէ ագչամ սապահ հասթանըն իւթիւնէ նարեկ օգուրըմըշ, ո՛ւհ աւանակ, գուսուրսըզ պէօյլէ պիր աւանակ, հօշ նէմէ՛ լազըմ... կէնէ պիր շէյ սէօյլէմէմ, կիւվէյիմ տիր... թո՛ւհ:

Մնացեալը յաջորդ թիւով

Գ. Փ.

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՆՏՐՄԱ. — «Հանրագիտակ» ի օրախօսիչները բաւական տարածուած է հոս, հակառակ տօքթ. երմոգի աղ-դարարութեան, կը խնդրենք Պատ. Խմբագրութենէն որ հաճի ասոր անմիջական դարմանը խորհիլ:

Ծ. Խ. — Դժբախտաբար այս հիւանդութիւնը թէ չատ տարածուած է և թէ չատ փոխանցիկ է, ուստի չի-ճուկը գտնող գիտունին մէկ տարուան «Հանրագիտակ» կը խոստանանք. . . բաժանորդագիրը կանխիկ:

ԷՏԻՆՃԻՔ. — Տեղւոյս հայ-լայք դասակարգէն շոյ մը իր մէկ հատիկ զաւկին համար դասատուներուն խոստացած 6 մէճիտը տուած ժամանակ 2 մէճիտ կը զեղչէ:

Ծ. Խ. — Խնդիր է գիտնալ թէ արդեօք այդ դասատուները տունին մեծ գործերն ալ վրանին առած են:

ԲԱՐԻՁ. — Տիկին Զապէլ Եսայեան շաքարի տուփը գտաւ և մէջինը ամբողջովին, թէեւ պայարցած, ամուսնին հետ կերաւ հատցուց:

Ծ. Խ. — Անոյններ ըլլայ, թող տուփը հոս զրկեն որ կափարիչը Անտանեանին՝ և միւս մասն ալ Զիֆթէ-Սառաֆին տանք:

ԵՏԻ-ԳՈՒԼԷ. — Սանկ հովը հարաւային եղած ատեն «կրթական հարցեր» ու չաթմիշ ընող չուչուր դրագէտ մը ինքզինքը իբր զարդագրող կը ծախէ կոր:

Ծ. Խ. — Թող ջանայ իր դպրոցականի տետրակները աւելի մաքուր և կոկիկ գրել, այնչափը բաւական է իրեն:

ՕՐԹԱԳԻԻՂ. — Վարժապետութենէ

«մեղայ» ի եկող միւսիւ մը ամսական 150 զրուշով մեծ վաճառատան մը վերելուկը վեր վար ընելու պաշտօնին կոչուեցաւ:

Ծ. Խ. — Թող իր 15 և 31 թիւ սիրուհիներուն չիմացնէ հա':

ԲԱՆԿԱԼԹԻ. — Նոր բացուած վարդ մը քովի տան չորս գործողութիւնը նող խաղերը դիտած ատեն պլուզը հօրը ձեռք տուաւ:

Ծ. Խ. — Մարդուկը չբարկանայ հա', թող ձգէ իր աղջիկը՝ որ ան ալ այդպէսով իր հաճէսը առնէ:

ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ. — Տիկին Ժողէֆին Ռըսէլ ամուսնալուծման վճիռ ձեռք ձգեց իր ամուսնոյն դէմ, որ զինք կը ծեծէ եղեր. . . ոտքերը պաղ ըլլալուն պատճառաւ:

Ծ. Խ. — Ամուսնալուծման ի՞նչ հարկ կար, թող գիշեր մը մեր Սամաթիացի կիներուն պէս քերչիփով պառկեր, նայէ էրիկը ինտոր կանուշնար:

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Մեր յարգելի աշխատակից Ներշապուհ, Համբարձման տօնի առթիւ, «վիճակ» ի ցանկ մը պատրաստած է յատկապէս «Հանրագիտակ» ի համար: Պիտի հրատարակենք զայն մեր յաջորդ թիւով, սիրուն ժամանց մը հայթայթելու համար մեր ընթերցողներուն:

* *

Սինկէրի գեղարուեստական չորրորդ ծուցահանդէսը բացուած է Բերայի Ընդհ. Տնօրէնութեան սրահներուն մէջ, Պօն Մառչէի դիմաց: Ծուցահանդէսը ամէն օր բաց է եւ մուտքը ազատ:

* *

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պատ. Գործակալութիւն ԷՐԶՐՈՒՄ, ստացանք նամակնիդ պարունակեալովը, չընորհակալութիւն:

ՕՐ ՆՈՐ

ԼՈՒՐ ՆՈՐ

ՈՏԱՆԱԾՈՐ

Լուրերու բաժին • Հանրագիտակ • ի
Ասկէ ետք գրել ինձ կը վիճակի,
Ուստի լուր պիտի տամ Զեզ յանգաթով,
Բայց չկարծուի երբեք թէ ասով
Միշտ պիտի գովեմ, միշտ պիտի ըսեմ լաւ:
Աղէկին գովես՝ գեշին ալ պարտաւ:

X

Անցած Ուրբաթ օր Պատրիարք Հայր մեր
Հիւանդանոցը ամբողջ այցելէր,
Եւ նոր շէնքերու կանգնումին համար
Տուեր օգտակար խրատներ յարմար:

X

Կիլիկիոյ մեր Ս. Կարող. Սահակ
Խառն Ժողովին գրեւէր եւ նամակ,
Իրաւաստութեան սահման մը տալին
Որ չծագի խնդիր մ'ապագային:
Վարչական գործը եւ ճամբու ընկիր
Որով հոգեւոր եւ շնչ ալ խնդիր:
Մայր Աթոռ Սիսիւն հետ թնալ հաշտ չէր,
Ասկէ զատ առաջ ունեին վեճեր:
Բայց երբ Ս. Սահակ վանքին առաւ դէպ,
Աստուծոյ իրարու հետ եւ շատ աղէկ:
Այս նամակին բուն նպատակն այն էր
Որ Կարողիկոսը եպիսկոպոսներ
Պիտի ձեռնադրէ հովուելու համար
Իբր առաջնորդ թեմերն անհամար:
Ուստի այս առթիւ Ան գիտնալ կուգէ
Թէ Պատրիարքարան խնդիր չյուզէ՝,
Երբ աստեղ Կիլիկիոյ դուրս թեմէն
Այլուր առաջնորդ ըլլալու դիմեն:
Խառն Ժողովն ալ նկատելով որ
Խնդիրը այնքան չէ շատ կարեւոր,
Նամակը առ այժմ թողուց մեկդի
Պատասխանելու մէջ ուրիշ նիստի:

X

Պատրիարքարան նպատակ սնունդին
Կը պահանջէ կոր իր վարձուն ուկին
Հիւանդանոցի վերջին հասոյթէն
Զոր ինք կը գանձէ միշտ, ամէն տեղն:
Հոգաբարձութիւնն, ինչպէս հերոսն ալ
Այս արդար տուրք փափաքի չտալ:

X

Խնամակալութիւն Սանասարեանի
Պիտի՝ քննութեան մ'անցընէր զանի,
Զի իր սեղանին վրայ շարունակ կան
Շատ մը նամակներ խիստ զանգաւական
Տեսուչներուն դէմ այս վարձարանին:
Փաստաբան Տիար Գ. Զաքարեանին
Խնամակալութիւն յանձնէր եւ պաշտօն
Քննութիւն մը զուտ ընէր մօտէն հոն:

X

Կելիպօլոյ երեսուն շաբաթ
Զֆահանջն որ ալ եւ կարողիկ,
Լսեմք թէ իր հետ քաջեր եւ ամբողջ
Ընկերու զանոնք ալ դաւանաւորի:
Ահա արարք մը անօրէն ու վատ,
Լոյս Լուսաւորչի ուրանալ հաւատ,
Արդեօք Վարչութեան Կրօնի. Ժողով
Կարգադրութիւն մը պիտի չընէ՞ փութով:

X

Խնամակալութիւն Հալաքիայի
Իր դպրաց դասը կազմել կը նախ:
Այս կիրակի օր ետք պատարագէն,
Որ եր եռաձայն, վարդապետ Բարգէն,
Եւ անդամներէն մեկ երկու անձեր
Վերը Ժողովի տնակն են անցեր,
Խորհրդակցելու համար այս մասին:
Քանակին մէջ կայ մէջ դպրաց դասին,
Ե. Կ. Եւսեան անդամն օգտակար
Խոստացեր ըլլալ նիւթական սասար,
Գեղեցիկ ձայնով աղօթս տղոց այն
Որ կը փափագին սորվիլ եռաձայն:

X

Վաղն եւ որ տրուի Սիւնեան բօստո,
Որուն ամէն մարդ տեսնով կ'ըստասէր,
Ուստի փութացէք օգտուիլ առթեմ
Կըսեն տնակները հասած եւ արդէն:

X


Վաճառականը պատուաւոր բանով
Էփենիսին ազնիւ Նառեան Սանով
Որ եր Վիեննա համար գործերու
Դարձած եւ Պոլիս մէջ անցեալ շաբաթ:

Գ.

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտէսի, քիւ 52



በግንባታው ላይ የሚሳተፉት ሰራተኛ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

Bovmin®


ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Արմէգ, Գաւառիգ եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. Պոլիս, Սուրբալի Հարաւ, Բօրիալիսի խաւի

Շրժանակ պիտույից ։

50—35



ապահիկ գիւտը չատ

մարտի և առողջա-

անաւորապէս ուղչաղ

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադ-
րութիւն ընել Ա. Սօղանձեան ստորագրութեան :

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափէներ, ամբիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունն հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-26

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ի

Ա. Յ Ս Մ Ա Ս Ը

ՏՐԱՄԱԴԻՐԵԼԻ Է ԾԱՆՈՒՑՈՒՄԻ